

2 P 1

Վ. Ս. Խ. Ն. ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՈՒՍՈՒՄՆԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԵԿՏՈՐ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հ Ա Յ Ո Յ Լ Ե Զ Վ Ի

I ԱՍՏԻՃԱՆԻ ԱՅԽԱՏԱՆԲԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«... Ծրագրների գիտական մարքսիստական
մշակումը պետք է ապահովի սխտեմատիկ գիտելիք-
ների ճիշտ սահմանված շրջանը»:

Հիկ (բ) Կի 1931 թ. սեպտ. 5-ի վերոշումից:

ՍՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՍՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՍՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

491.99(07)

ժ - 89

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏՅՐԱՏ

„ՍԱԽԵԼԳԱՄԻ“

Թ Ի Ֆ Լ Ի Ս — 1932



70-157

491 15 MAY 2012

Ծրագիրը մշակող բրիգադի կազմը՝
Աղաբաբյան Կ., Ավագյան Շ.,
Ավետիսյան Մ., Սամբուլյան Ա.ճ.

Ընդհանուր խմբագրություն՝ Գոգուածե Գ.
Ստիլիստ՝ Աղաբաբյան Կ., Նորայր
Սրբազրիչ՝ Բաբուրյան Գ.



Ստիլիստի 1-ին տպ.
Պրեսանովի փող. № 91
Պատվեր № 509
Գրառեսյ 1082 ՝ Տիրաժ 1000

7672-53

180 MAY 2012

20705

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԽՈՍՔ

Հիկ (բ) Կենտկոմի 1931 թվի սեպտեմբերի 5-ի վորոշումը ճշտորեն սահմանում է մայրենի լեզվի ծրագրի բովանդակությունն ու բնույթը: Նոր ծրագիրը պետք է աշակերտությանը տա սխտեմի յենթարկած գիտելիքների բավական զգալի ծավալ, վոր ապահովի ընդհանուր զարգացումը և աշակերտին նախապատրաստի պոլիտեխնիկական դպրոցի հետագա աստիճանի համար:

Կոմպլեքսային ծրագրում մայրենի լեզուն աչքի չեր ընկնում վորպես առանձին առարկա. նա յենթարկվում եր կոմպլեքսներին և թեմաներին, անկախ իրեն անհրաժեշտ սխտեմից և հետևողականությունից: Այդ պատճառով ել աշխատանքի ժամանակի բյուջեն վորոշ չեր: Սրանով ե բացատրվում այն հանգամանքը, վոր յերեխաների կարդալու պրոցեսը զարգացած թույլ ե նրանց բանավոր և գրավոր խոսքը:

Լեզվի յել գրականության ուսուցումը սոցիալիստական շինարարության ներկա ետապում, յերբ ԽՍՀՄ մտել ե սոցիալիզմի շրջանը, մեծ և բազմակողմանի նշանակություն ունի: Լեզվի և գրականության ուսուցման առաջ մենք դնում ենք մի ամբողջ շարք կոնկրետ հարցեր: Այդ հարցերը բղխում են այն սերնդի դաստիարակության խնդիրներից, վորը վերջնականապես կկարողանա հաստատել կոմունիզմը:

Առաջին աստիճանի դպրոցում մայրենի լեզվի ուսուցման նպատակն ե՝ ախտիվ կերպով մասնակցել Մարքսիստական - Լենինյան աշխարհայացքի հիմքի ու գիտակցության մշակմանը, աշակերտի մեջ առաջացնել և ամ-

րապնդել, կոմունիստական դաստիարակութեան խնդիրները տեսակետից, անհրաժեշտ հոլովել և տրամադրութեամբ, հաստատուն կերպով աշակերտութեանը զինել պրոլետարիատի դասակարգային պայքարին և սոցիալիստական շինարարութեանը մասնակցելու անհրաժեշտ գեղեցիկ մեկը՝ բանավոր և գրավոր կանոնավոր խոսքի սիստեմի յենթարկված գիտելիքներով - ունակութեամբներով:

Վոչ մի ժամանակ խոսքի բարձր կուլտուրան այնքան հարկավոր չէր յեղել, վորքան այդ անհրաժեշտ սոցիալիստական շինարարութեան ներկա շրջանում, յերբ միլիոնավոր աշխատավորներ ենտուղիազմով գրավված են սոցիալիստական շինարարութեան մեջ, յերբ կազմակերպված մասսաներն ակտիվ կերպով մասնակցում են դիտութեան և տեխնիկայի զարգացմանը, պայքար են մղում տնտեսական ու կուլտուրական ֆրոնտում: Լեզուն պետք է լինի արտահայտիչ և նա պետք է աջակցի զարգացած տեխնիկային և մարդկանց սոցիալիստական արտադրական փոխհարաբերութեաններին:

Սոցիալիզմի շրջանը մտնող մասսաների լեզուն անհրաժեշտ է մաքրել հին փոխհարաբերութեաններ և հին կենցաղ արտահայտող տարրերից, պետք է դուրս վանել այն բոլորը, վոր սոցիալիստական փոխհարաբերութեանների համար անընդունելի յեն և անհարմար: Աշակերտի բառապաշարը պետք է այնքան հարուստ և առաձգական լինի, վոր նա կարողանա կենդանի, մաքուր, կանոնավոր և նոր կյանքին համապատասխան լեզվով իր մտքերը դասավորել և արտահայտել: Այս տեսակետից մեր դպրոցներում մինչև այսօր ել, անկասկած, թույլ կողմեր են նկատվում: Մայրենի լեզվի ուսուցումն աշակերտին բավարար չափով գիտելիքներ - ունակութեաններ և հմտութեաններ չէր տալիս:

Առաջադրած ծրագրով լեզվի և գրականութեան ուսուցումը պահանջում է վճռական պայքար յերկու ֆրոնտում՝ աջ ուղղությունից դեմ, վորպես գլխավոր վտանգի, վորն աշխատում է վերականգնել հին, սխալատիկ բառային դպրոցը, և «ձախ» ուղղությունից դեմ, վորը բացասում է դպրոցի գերը կոմունիստական դաստիարակութեան մեջ, իջեցնում է դիտութեան հիմքերը յուրացնելու նշանակութեանը, դպրոցի աշխատանքը լուծում է հասարակական-ոգտակար աշխատանքի մեջ:

Նոր ծրագիրը կազմված է առարկայնութեան սկզբունքով: Նա լեզվին հնարավորութեան և տալիս կոմունիստական դաստիարակութեան սիստեմի մեջ համապատասխան տեղ գրավելու և վոչնչացնելու առարկայի դիմադրելութեանը:

Ծրագրում տված նյութը դասավորված է լեզվի սիստեմատիկ դասընթացի համաձայն, վորի վրա պետք է կառուցվի հետևյալ աստիճանի պոլիտեխնիկական դպրոցի մայրենի լեզվի ծրագիրը:

Ծրագիրը կազմված է հետևյալ սխեմով.

1. Գիտելիքներ - ունակութեաններ:

2. Առարկայի նյութը:

3. Մշակման ձևերը և մեթոդական ցուցմունքներ:

Յերկրորդ սյունակում («Առարկայի նյութը») տրված է գրականութեան և լեզվի նյութը, այսինքն այն հարցերի և գրական որինակների միմյանում, վորոնք պետք է խմբում տարվա ընթացքում մշակվեն և այդ միջոցով ապահովեն սիստեմի յենթարկված գիտելիքների - ունակութեանների պարտադիր գումարը:

«Առարկայի նյութը» սյունակում հիշված գրական նյութի վրա պետք է լեզվական աշխատանքներ կատարել և դրանով հասնել լեզվի գիտելիք - ունակութեանների լրիվ հաստատուն յուրացմանը:

Ուսուցիչն իր աշխատանքի ծրագիրը կազմելիս պետք է խառը կերպով դասավորի վտանգավորները և պատմվածքներն ըստ նրանց բովանդակութեան նմանութեան, ըստ ընտրութեան: Գրական նյութերը տրված են հասակի համապատասխան, նրանց դժվարութեան ու հեշտութեան, լեզվի գեղարվեստականութեան և, առաջին հերթին, իդեոլոգիական կայունութեան տեսակետից: Թված գրական նյութի անցնելը պարտադիր է, բայց դասատուն կարող է ընտրել ամեն տեսակետից ընդունելի գրական այլ հոդվածներ:

I և II խմբի գեղարվեստական գրական նյութը դասավորված է ըստ սեզոնների, իսկ III և IV խմբերի ծրագրերի մեջ սեզոնականութեանը մասամբ է պահպանված:

Լեզվի նյութի մեջ լեզվական փաստերի մշակման ժամանակ ուշադրութեան է դարձվում բանավոր խոսքի ինտոնացիայի (առողանութեան) վրա: Գրավոր ժամանակ և կետադրութեան դանազան նշանների գործադրման գեպքում, ղեկավարը պետք է հատուկ ուշադրութեամբ վերաբերվի ինտոնացիայի դիտողութեանը, վերջինս անխզելիորեն կապված պետք է լինի բառի կամ խոսքի բովանդակութեան հետ:

Ինտոնացիայի դիտողութեան և նրա շուրջը տարվող աշխատանքի ժամանակ, վոչ մի դեպքում, լեզվի դասավանդման մեջ ձևական աղճատումներ չպետք է լինեն: Բառը կամ խոսքը պետք է դիտվի բովանդակութեան և ձևի դիալեկտիկական միասնականութեան տեսակետից:

Չորսամյակի խմբերում առանձին տեղ է տրված բառարանի աշխատանքին: Այս աշխատանքին ղեկավարող պետք է լայն բնույթ տա և խմբի բառարանը պետք է ոգտագործել վոչ միայն զանազան բառերի բացատրութեան համար, այլև բառերի ուղիղ գրութեան համար: Ուսուցիչ բառարանի աշխատանքը, բացի վերոհիշյալ մոմենտից, վորն իր հերթին հետաքրքիր է յերեխայի համար, կնպաստի նրա բառապաշարի հարստացմանը, պետք է գործադրել բառի ուղիղ գրութեան և խոսքի տեխնիկայի զարգացման համար:

Լեզվի աշխատանքը պետք է հիմնվի ժամանակակից հարուստ, կենդանի և մաքուր, բոլորի համար հասկանալի, պարզ բանավոր և գրավոր լեզվի խնդիրների հաստատուն յուրացման վրա: Սոցիալիստական շինարարութեան կադրերի լեզվի բարձր կուլտուրան պետք է ուշադրութեան կենտրոն լինի: Դասատուի բանավոր և գրավոր խոսքը պետք է աշակերտների համար

ամենալավ որինակը դառնա: Այդ տեսակետից դասատուն պետք է իր վրա լուրջ աշխատանք կատարի:

Հեղափոխական տոնների վերաբերյալ գրական որինակները միացած են զանազան նյութերի հետ: Նշած նյութերը ղեկավարը պետք է իր ժամանակին գործադրի:

Գրականության և լեզվի նյութերի մշակման ժամանակ դասատուն պետք է ուշադրություն դարձնի գիտելիքների հաստատուն յուրացման և նրանց գործնական կիրառման վրա: Թեորիայի և պրակտիկայի միասնականության իրագործման միջոցներ պետք է լինեն հասարակական-ոգտակար աշխատանքի զանազան տեսակները, սակայն նրանք չպետք է լինեն վերացական, յուրաքանչյուր հասարակական - ոգտակար աշխատանք պետք է յենթարկվի գալորցի ուսուցման-դաստիարակչական նպատակներին:

Հարկ յեղած դեպքում, մայրենի լեզվի ուսուցումը պետք է կապել մյուս առարկաների հետ, բայց այդ կապը յերեք արհեստական, բռնազոր-սիկ ընույթ չպետք է կրի. այդ կապն անհրաժեշտ է լեզվի և գրականության համար, նա պետք է նպաստի լեզվի սիստեմատիկ աշխատանքին և գիտելիքների ու ունակությունների յուրացմանը:

Գեղարվեստական-գրական հոգվածների մշակման ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել յերկի բովանդակության, նրա միասնականության կողմի վրա և յերեխաներին մատչելի ձևով յերևան բերել յերկի դասակարգային ընույթը: Այս միջոցով պետք է ապահովել գրականության ակտիվ մասնակցությունը յերեխաների կոմունիստական իդեոլոգիայով դաստիարակման խնդրում:

Այդ տեսակետից մեր հերթական խնդիրն է՝ մարքսիստական-լենինյան տեսակետից լուսաբանել գալորցի համար սիրտանի գրականությունը և ուսուցչությունն ապահովել ոժանդակող քննադատական գրականությամբ:

Յուրաքանչյուր գրական հոգված պետք է մշակել կոմունիստական դաստիարակության տեսակետից: Առողջը, ընդունելին — հասկանալ և յուրացնել, իսկ ոտարը, խորթը, անընդունելին — քննադատել և հրաժարվել: Յերկի ձևը, նայած յերեխաների հասակին ու պատրաստականությանը, պետք է ուսուցմասիրել բովանդակության հետ ամբողջականությամբ: Գրական հոգվածների սոցիալ-դասակարգային բովանդակության մշակման ժամանակ լեզուն և գրականությունը չպետք է դառնան հասարակագիտության լրացումը, «լեզուն չպետք է կորցնի իր սիստեմը և անմիջական դերը»: Համապատասխան ուշադրություն պետք է դարձնել նաև գրական յերկերի արտահայտիչ ընթերցանության վրա: Գրքի և լրագրի վրա աշխատելու ունակությունները, կարգացածի հասկանալն ու կիրառելը հսկայական նշանակություն ունեն: Այս տեսակի աշխատանքին նույնպես պետք է կարևոր տեղ տալ: Ուսուցչի ղեկավարությամբ անհրաժեշտ է զարկ տալ յերեխաների արտադասարանական — մանկական ժուրնալների, գեղարվեստական, քաղաքական, տեխնիկական և այլ հանրամատչելի-գիտական գրքերի ընթերցանությանը:

Դպրոցներում գրավոր աշխատանքների դրվածքը շատ թույլ է. յերեխաների աշխատանքները թույլ են թե բովանդակության, թե լեզվի և թե գեղագրության տեսակետից: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մտքերի հետևողական և կանոնավոր արտահայտման ունակությունների դարգացմանը:

Պետք է ուժեղացնել գրավոր աշխատանքի ղեկավարությունը, նախորդ և հիմնավորապես պետք է մշակել այն հարցը, վորը պետք է գրավոր աշխատանքի նյութ դառնա: Անհրաժեշտ է կանխել յերեխաների սխալները, ստուգել աշակերտների յուրաքանչյուր աշխատանքը (ուղղել սխալները) և բոլոր թերություններն ուղղելով պետք է ձեռք բերել բազմակողմանի - կանոնավոր գրավոր խոսքի հաստատուն գիտելիքներ և ունակություններ:

Գիտելիքներ յեւ ռեակտորայուններ	Ա. ռ. ա. ր. կ. ա. յ. ի. ց. յ. ո. ւ. ր. ր.	Մասկման ձեւերը. մարտական ցուցանիշներ
1. Կարողանալ դպրոցի և տան հանձնարարումները կատարման ժամանակ դորձադրել կազմակերպված կենդանի խումբի ունակությունները:	1. Ֆեռեխաների խումբի կազմակերպումը 1. Ուսուցիչն ուսումնասիրում է յերևաններին և պարզաբանում է նրանց բառապաշարը:	
2. Ոգտագործել լուղունդներով պահպանները ինչպես դպրոցում, այնպես եւ տանը (առողջապահություն, պաշտպանություն, հեղափոխական տոների հետ կապված):	2. Ֆեռեխաների բանավոր, կենդանի խումբը դարգացնելու համար՝ վարժեցնել նրանց մարքանի լեզվով բարձր, պարզ, առանց շտապելու խոսելու և պատմելու շարժումները (յերևանների կյանքը, նրանց աշխատանքը, հասակավորների աշխատանքը, բնույթյան յերևույթները, կենցաղը), իրենց տպավորությունների ու ապրումների, կատարած աշխատանքների ու երգիւրսիաների մասին:	Ուղղել մանկական խումբի պահպանները իրողները՝ կակաղելը, վերջավորությունները կուտակելը: խոսելու ընթացքում շրջանառության անկանոնություններ և այլն: Այս աշխատանքը պետք է սկսել հենց մանկան դպրոց մտնելու առաջին օրից և շարունակել այնքան ժամանակ, վերջան դա անհրաժեշտ է տվյալ բացը վերացնելու համար:
3. Կարողանալ համառոտ բանավոր պատմություն - հաշվետվություն տալ հարկուրումն անել կատարած աշխատանքների մասին (նվազ աշխատել, ինչպես, արել, ինչպես եւ աշխատել ինչ և	3. Այս դիտողությունները հետ կապված՝ կարողանալ ուսուցչի հարցերին պատասխանել՝ ինչպես դատարանական պարագմունքների ժամանակ, այնպես եւ խաղերի և երգիւրսիա-զբոսանքների ժամանակ:	Մանուկը դպրոց գալուց առաջ իր շրջապատի լեզվով և արտահայտվում, նա իր լեզուն ունի: Մեր յերեխաների մեծ մասը դավաճարաբարում և խոսում: Պետք է հաշվի առնել այս հան-

ստացվել), կատարած հանձնարարությունների մասին (նշել եւ հանձնարարած, ինչպես է կատարած հանձնարարությունը):

4. Կազմակերպել խաղերի և յերգերի դրամատիզացիա՝ կապված բնույթյան յերևույթների (օրինակ՝ բուռնություններ, չուն), մեքենաների (ինչպես է աշխատում տրակտորը, հողմամաղը), հասարակական կյանքի յերևույթների դիտողությունները հետ կապված,

գամանքը և մանկանը հենց առաջին տարվա առաջին ամիսներից պետք է աստիճանաբար ընտելացնել դրական լեզվին: Հետագայում արդեն գերիշխող պետք է լինի գրական լեզուն, բայց համապատասխան դեպքերում պետք է ոգտագործել դավաճարաբարում (մանավանդ բաների ժամատի և բերականական բացատրությունների ժամանակ): Մեթոդական տեսակետից կարելի է փոր նշանակություն ունի Ա. խմբի առաջին ամսվա աշխատանքը: Առաջին ամսում յերևաններին չպետք է նեղ իմաստով գրաճանաչության ծանոթացնել, այլ պետք է պատրաստել այդ աշխատանքի համար:

Իրերի և նկարների դիտողություն միջոցով, դպրոցական շրջապատն ուսումնասիրելիս պոլիտեխնիկական աշխատանքներ, խաղերի և կրկնաբանների ժամանակ պետք է վարժեցնել իրենց մտքերի ու տպավորությունների ախտահարումները:

Պիւնիքներ չեղ ունակութիւններ	Ա. ռ. ա. ր. կ. ա. յ. ի. 6. յ. ո. յ. ր.	Մշակման ձեւերը, մերթադրական ցուցմունքներ
ուղիական ընույթ կրող խաղեր, գնացքների մեկնում և այլն: (Այս բոլորը մանկավարժի ղեկավարութեամբ): 5. Կարողանալ կարգացածի մասին կազմակերպված մտքերի փոխանակութիւն կազմակերպել, կարողանալ՝ ա) քննութեան համար առաջադրել հարցեր, բ) կարողանալ այդ հարցերին պատասխան գտնել, գ) արտահայտել իր կարծիքը, դ) լրացնել իր ընկեր-բով արտահայտածը, յե) ցույց տալ, թե ի՞նչի հետ համաձայն է և առարկել:	5. Վարժեցնել յերեխաներին իրենց դիտողութիւնները կոնկրետ քննութեան յենթարկելու: Դիտողութիւնների մասին կապակցված խոսքով արտահայտելու վարժութիւն: Մանկական ժողովներում կարողանալ փոքրիկ զեկուցումներ և հարցումներ լսել, տված հարցին պատասխանել և ասել տվյալ հարցի մասին իր գիտեցածը:	Այս աշխատանքներին դու-դահեռ պետք և կենդանի և կոն-կրետ որինակներ իր ոգնութեամբ դադարիւր տալ, վոր առարկա-ներն ու յերեւոյթներն անուն-ներ ունեն (բառեր), վոր իրար հետ միացած բառերը մտքեր ու ցանկութիւններ են արտահայտում:
6. Կազմել, զրի անցկացնել և ոգտագործել աշխատանքի և կամպանիաների հետ կապված լրդունգներ:	6. Դրաճանաչութիւն (կարդալ-զրել): II. Քառասնի աշխատանք ա) Կազմել ամբողջական խոսք՝ ժամանակի հարաբերութիւն արտահայտող բառերի ոգնութեամբ (յերեկ, այսր, վաղը, սկզբից, հետո, նախորդ): տարածութիւն	Դրաճանաչութիւնը պետք և անցնել ամբողջական բառերի (զրել-կարդալու) մեթոդով: Յերեխաներին փոքր հասակից պետք և վարժեցնել զրքի վրա աշխատանք կատարելուն, այդ ուղղութեամբ պետք և հարստացնել Ա. խմբի յերեխաների բա-

ուղաղարը և հետեւ, վոր աշա-կերտներն ունենան իրենց բա-ուարանները:

(մոտ, հետո, վերե, ներքե, ուղիւ, աջ, ձախ, բարձր, ցածր), վորակի (ալելի լալ, ալելի վատ), քանակի (ալելի մեծ, ալելի փոքր), հարստացնել աշակերտների բառապաշարը ստացած գիտելիքների հետ կապված նոր դադարներով և տեխնիկական ու գիտա-կան բառերով: դ) պայքար դասակարգայ-նորեն անհարադատ բառերի և դարձվածք-ների դեմ (յիւղում, հնացած բառեր, ար-համարհական մականուններ և այլն): դ) ա-շակերտները կազմում են իրենց բառարան-ները և հարստացնում նոր բառերով:

III. Գերեցանութիւն

7. Կարողալու ունակութիւնների դրժնական կիրառումը հանարակական կյանքում (ժուր-նալ-դասաղբից, լրդրից փոք-րիկ հոգիաների, պատմվածքնե-րի և փոտանալորների բարձր ընթերցանութիւն): Կարողանալ «հոկտեմբերիկ» թերթից կարդալ հարմար հոգվածներ:

8. Հիշողութիւն զարգացում — փոքրիկ փոտանալորներ, յեր-

ժիշտ կարդալ կարճ, մատչելի, պարզ ընաղիլ, առանց բառեր բաց թողնելու, առանց աղավաղումների և կրկնութիւնների, պահպանելով առողջութիւն և կետադրու-թեան պահանջները:

Վարժեցնել կարգացածը պատմել ա) նը-կարներում տված հարցերի համապատասխան, բ) ըստ ուտուղի հարցերի: Պատ-մվածքների և փոտանալորների ըստ դերե-րի ընթերցումը: Կարգացածի մասին կար-ծիքների կազմակերպված փոխանակութիւն:

Առանձնապես պետք և ուշա-դրութիւն դարձնել գիտակից ընթերցանութիւն և պրութիւն վրա:

Գիտելիքներ յնվ ունակութայուններ	Առարկայի ցուցակ	Մշակման ձևերը, մեթոդական ցուցումներ
գեր, լողունգներ սովորեցնելու միջոցով: 9. Չարգացնել յերեխաների կարողալ-գրելու տեխնիկան:	կարգալիս, արտասանելիս լմանալ՝ լինչ և վերնագիրը, լինչ կապ կա վերնագրի և բովանդակության միջև: Կարգալ Ա. խմբի ընթերցարանից, մանկական գրքույկներից, գլխավորապես ուսուցչի գեկավարությամբ, հետևելով առողջանության ու կետադրությանը: Ցույց տալ, թե կարգացածի մեջ լինչի մասին և խոսքը: Ինքնուրույն կերպով տալ կարգացածի համառոտ բովանդակությունը և եյական կողմերը:	Գրավորի ժամանակ կանոնավոր նստել, մատիտը, գրիչը կանոնավոր բռնել, պահպանելով առողջապահական բոլոր պահանջները: Գրելու աշխատանքը պետք և նախապատրաստել նկարչությանը: Պետք և նկարել աշակերտականներ, վորոնց հիմնական գծերը նման են դասերի ելեմենտներին: Հետևել վոր յերեխաները գրեն ճիշտ և կանոնավոր ձևադրով, պահպանել տա-
10. Կուլեկտիվ կերպով կազմել և հետևել յեղանակի ու աշխատանքի որացույցին:	Ազատ նկարչության ժամանակ հետևել վոր վոր յերեխաները ծանոթանան տառերի ելեմենտներին հետ: Ուսուցչի անմիջական հսկողությամբ գրել մաքուր, պարզ, խոշոր ձևադրով տառերով, առանց բառեր և տառեր բաց թողնելու: Ընթացիկ աշխատանքների հետ կապված համառոտ, կարճ լողունգների գրանցում, կուլեկտիվ պատմվածքների, աշխատանքի պրոցեսների, եքսկուրսիա - գրոսանքների գիտողությունների գրանցում: Գրատախտակից արտադրել կուլեկտիվ կերպով կազմված լողունգներ, փոքրիկ պատ-	Գրավորի ժամանակ կանոնավոր նստել, մատիտը, գրիչը կանոնավոր բռնել, պահպանելով առողջապահական բոլոր պահանջները: Գրելու աշխատանքը պետք և նախապատրաստել նկարչությանը: Պետք և նկարել աշակերտականներ, վորոնց հիմնական գծերը նման են դասերի ելեմենտներին: Հետևել վոր յերեխաները գրեն ճիշտ և կանոնավոր ձևադրով, պահպանել տա-

մղվածքներ: Մեծատառի՝ գործածությունը խոսքի և հատուկ անունների սկզբում: Բառերի տողադարձը լողունգային (աշուն, ալի, բան-վոր, դա-բուն): Ինքնուրույն կերպով գրել իր անունը և հասցեն, դասարանական ընկերների անունները և ազգանունները: Կազմել պարզ հայտարարություններ, պատրանի կազմի և հերթապահների ցուցակներ:	ոների մասերի գրութայն համաշխարհային տառերի ու բառերի միջև ճիշտ հետադարձությունը:
V. Լեզվական դատողություններ Անշակերտի կազմակերպված պատասխանները խոսքի առաջին որինակ: Հասարակ, պարզ խոսք կարգալու և արտասանելու վարժություն: Խոսքը վորպես աշակերտի այս կամ այն առարկայի մասին գիտեցած գիտելիքների արտահայտություն: Բնագրի մեջ խոսք գտնելու վարժություն: Վերջահետը վորպես խոսքի վերջանալու նշան: Մեծատառի գործածությունը խոսքի և հատուկ անունների սկզբում: Խոսքի մեջ ըստ մտքի իրար հետ կապված բառերը կոնկրետ վարժություն: Առանձին բառերը խոսքի մեջ: Արտասանությունները բառերը վանկերի	

Գիտելիքներ յեկ ունակութայուններ	Ա. ու ա ռ կ ա յ ի ն յ ու ը	Մ'սակման ձեկեր, մերթական ցունճուններ
	բաժանելու վարժություն: Բատի մեջ ջուկել հնչյունը, հիմնվելով նրա արտասանության վրա: Հնչյուն և տառ, արտասանելն ու գրելը: Արտասանությանը ու գրությանը տարբերվող բաժերում հնչյունն ու տառը զուգադրել և հիշողության մեջ ամրապնդել նրանց ուղիղ գրությունը: (Մարդ-մարթ, վարդ-վարթ, թուղթ-թուխտ և այլն): Դիտել յերկձայները՝ այ, ոյ, ույ, եյ, յա, յու, յո, յի, յի, և սրանց ուղղագրությունը: 1. Դրանանաչության համար պետք և ողտագործել «Կարմիր Գրու» այբբենարանը: 2. Վտանաավորների և պատմվածքների համար պետք և ողտագործել «Հսկանիւթիկ» յեկ «Կարմիր Միլեր» ժուրնալները: «Լուսարձակ» Ա. տարի 1. Դպրոցում 2. Դրագետ 3. Պիոներ 4. Մրակու գեմ 5. Ջմեռ 6. Փաթիլներ 7. Հունվարի 9-ը	

8. Լենինի մանկությունը
9. Պիոներ Մոսկն
10. Ջմաճ թուչունները
11. Պատիկ ծիտ եմ
12. Արջի ձմրան քունը
13. Հասակի նամակը
14. Պատիկ կարճիլը բանակայինը
15. Կրկեսում

-
1. Վերջին փաթիլներ
 2. Ջնճաղիկ—Ննկո Ապեր
 3. Անցան
 4. Մեր նոր ընկերները
 5. Մարտի 8-ը
 6. Յեղը և լինում
 7. Մարտի 8-ին
 8. Հատիկ
 9. Մանուշակ
 10. Շաբաղանով
 11. Կառուցողներ
 12. Մառտունիկ
 13. Գարուն
 14. Մեղու
 15. Անճունի ճուտիկը

Պատկան ձեռքը, մերդական ցուցմունքներ	Ա. Ն. Վ. Կ. Վ. Ե. Զ. Ը. Թ.	Գրեթեմներ յեվ ունակություններ
	16. Զրվեծ 17. Մալաոնակ 18. Զուրը 19. Շոֆեր 20. Մայիսի մեկը 21. Մայիսի մեկի տոնը 22. Դժվար հանելուկ 23. Ճանճը 24. Գաղանանցում 25. Շարժվող տունը 26. Մեր խումբը պատր. դպր. դուրս 27. Ի՞նչ պետք է անել ամառն եքսկուրսիայի ժամանակ 28. Յճրբ ե լինում	12. Կազմել և գրանցել խմբի հարվածային պարտականու- թյունները: 13. Սոցմրցման հրավիրել ու- րիշ դպրոցների յերեխաներին և ձնողներին: Կուրեկտիվ կերպով սոցպայմանագիր կազմել, նա- մակներ ուղարկել և այլն: 14. Յելույթներ դպրոցական ժողովներում, հոկտեմբերիկների ողակներում, դպրոցական հան- դեսներում:

7672-53

Ա. Ն. Վ. Կ. Վ. Ե. Զ. Ը. Թ.	Ա. Ն. Վ. Կ. Վ. Ե. Զ. Ը. Թ.	Պատկան ձեռքը, մերդական ցուցմունքներ
Յերեխայի խումբի կազմակերպումը	1. Բանավոր խումբ: Ամբան ապավորու- թյուններ, վարժեցնել յերեխաներին ամ- բողջացնել մութերը թե ամբան տեսածների և թե իրենց մոտ արտադրության մասին. հարցացուցաններով. նախագծով պատմել սովորեցնել. ուշադրություն դարձնել նոր բաների վրա, վարժեցնել նրանց իրենց տե- սածն ու լսածը կողեկտիվ մշակել ու պատ- մել. Պատմողական կողմի վրա մեծ ուշա- դրություն դարձնել. սովորեցնել պահպա- նել խոսքի տեմպը, արագ և դանդաղ բար- ձր և ցածր պատմելը: Յերեխայի պատմածը քննադատել և գնահատել, բովանդակության (հշտության), կառուցվածքի (բաների ու նախադասու- թյունների կապի) և արտահայտիչ լինելու (ինտոնացիայի) տեսակետից: 2. Բառարանի աշխատանք: Իրենց նյու- թի և աշխատանքի հետ կապված նոր բա- ռեր, հակառակ բաների ոգտագործումը. (բան- վոր, կապիտալիստ, սուր, բուլթ), նոր բա-	Գրողի և իրենց խմբի աշ- խատանքների հետ կապված խըն- դիները քննության առնելու կարողություն (ո՞վ չի գալիս, ի՞նչու, հիմա ի՞նչպե՞ս են սովոր- ում), գործնական առաջարկներ տալու կարողություն (ի՞նչ անել և այլն): Լոգոշնչներ կազմելու և գրե- թու կարողություն ադիտացիոն պատակով (բերքի, հոկտեմբերի և այլն տոներին), դպրոցական հանդեսներին յերույթներ (վոդ- յույն, յերգ, խաղ, արտասանու- թյուն): Տարած աշխատանքի համար պատասխանատվությունը դար- գացնելու նպատակով փաստա- թղթեր կազմելու կարողություն (պարզ ձևի), խմբակի, բրիգադի պարտականությունները և պար- տականությունների բաշխումը, անկետ լցնելու, հայտարարու-

թյուն, դիմում, թեթեւ արձանագրութիւն գրելու կարողութիւն, երենց աշխատանքի մասին կիսամյակների վերջը աշխատանքի վերաբերյալ տալ հաղորդումներով և հաշվետւութիւններով հանդէս գալու կարողութիւն, այդ հաղորդումները գրովոր տալու կարողութիւն, երենց աշխատանքների ցուցահանդիսի ձեւակերպումը, ցուցադրած նյութերի բացատրութիւն տալու կարողութիւն:

Չափածո գրվածքներ անգիր անելու, թվականներ, անուններ, փաստեր, թվեր վերհիշելու ունակութիւն:

Լրագրի բարձր ընթերցում, (նախորդ պատրաստվելով ընթերցման համար):

Յեղանակի և աշխատանքի որացուցիչ հետեւելու և կադմիս կարողութիւն:

ուերից բառաբան կազմելը, ալբերական կարգով բառերի դասավորումը, հատկապէս դժվար բառերի գրանցումը (տնտեսահաշիվ, կուրաճ, հաշվահարկ, գյուղատնտեսութիւն): հետագայում բառերը դասավորել և ըստ իմաստի և ըստ կազմութիւն, (ըստ իմաստի՝ հսկա — շատ մեծ, ըստ կազմութիւն՝ հսկա — պարզ բառ, հողագործ — հողի վրա աշխատող, հողագործ — բարդ բառ):

3. Անթիւցում: Տպագիր և ձեռագիր բնագրերի արտահայտիչ ընթերցում: Ճիշտ շեշտադրումներ բառի վրա նախադասութիւն մեջ, պատմողականի, հարցականի և բացականչականի առոգանութիւնը, նախադասութիւնների մեջ դադար — պատուհա, կարգացածի մասին կազմակերպված ձևով մշտնջերի փոխանակութիւն և այս ունակութիւն խորացումը:

Յերեսաների կարգացածի քննութիւն, կարգացածի դրամատիզացիան, կարգացածի վերլուծութիւնը, գլխավոր մտքերի նշումը, հետեւողականութիւնը մասերի վերածելը, այդ մասերի վերնագրելը և վերնագրելով ուղած նյութի գտնելը, ընթերցածը հետեւողականութիւնը պատմելը, ծանոթացնել վերնագրին, գրքի անվանը, հեղինակին,

տպագրութիւն տեղին և ժամանակին, ծանոթացնել գրքի բաժիններին, ցանկի միջոցով գտնել հոդվածը, վարժեցնել մանկական լրագրի և ժուրնալի ընթերցմանը:

4. Գրավոր: I խմբի համեմատութիւնը գրել ավելի բարդ բառեր և խոսքեր (նախադասութիւններ):

Տված հարցերին գրովոր պատասխանել, կազմել և գրել առնել երկուբախտի, տնտեսաբանութիւն, աշխատանքի ծրագիրը (ուսուցչի ղեկավարութիւնը), կազմել և գրել (նաև արտագրել գրատախտակից) կատարած աշխատանքի համառոտ պատմութիւն (ուսուցչի հսկողութիւնը), լրդունքներ գրել, անկէտ լցնել, արձանագրութիւն, հայտարարութիւն, նախագծելով գործնական գեկույց գրել (կոլեկտիվ կերպով կազմելով), հոդվածների համառոտ բովանդակութիւնը նախագծով: Անձնական գրտողութիւնների, ապրումների, նկարների, ձեռք բերած գիտելիքների ինքնուրույն համառոտ շարադրում:

Ստեղծագործական աշխատանքների փորձեր:

5. Քեռականություն: Կետադրություն՝ խոսքի մեջ հակադրել հարցականի, բացահայտականի և շեշտի արտգանությունը և տալ տրանսկրիպտը՝ վերջակետով, առողջանություն հարցականը, շեշտը, բացահայտականը, բացահայտության նշանները՝ վերջ, բառերի և պարզ նախադասությունների մեջ «և» և «ու» շաղկապով, պարզ նախադասությունների մեջ «բայց»-ից, «վոր»-ից, «իսկ»-ից առաջ ստորակետի գործածությունը: Մեյրենը, հնչյուններ և տառեր, ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, վանկ, տողաբարձ, յերկբարբառներ, «յ» կիսաձայն հնչյունը, բառի փոփոխությունը հարցելով (ուղղական, բացատրական և գործիական հոլովները, առանց տերմինների), գաղափար տալ ներկա, անցյալ և հրամայական ձևերի մասին, բառերը խզմաբաժնի ըստ այդ ձևերի, հարցերի միջոցով դանել նաև թվի համաձայնությունը:

Չայնափոխություն—ուսուցիչ, ուսուցչի, մուկ, մկներ, ջուր, ջրի, տեր, տերել, հանգեպ, հանդիպել, աշակերտ, աշակերտություն, աշակերտական միասնակ աբստրակցիոն բառերը խմբավորել, բարդ բառեր, ա հոգևապար, ածանցներ՝ ան, դժ, տ, չ, ապ,

Ահաատարակ վոչ միայն կետադրությունը, այլև մի վերևի նոր հակադրություն տալու համար միշտ պիտի վերջանի խոսքը՝ ամբողջովին և նրա մեջ տալ այդ նորը: Գերականությունները II խմբակում մենք ծանուրանում ենք գլխավորապես հնչյունաբանություն վրա: Այս բոլորը, ուսուցչական վրա: Այս բոլորը, վոր նշված և այստեղ, պիտի կապել անցնելիք հոգևածների և լեզու կենդանի լեզվի և խոսքի հետ, նոր բան տալիս պետք և նորը նրանց համար ունակություն դարձնել և յերևաններին պիտի համոզել բաղաձայնի որինակներով, այդ գերակներ վարժությունների միջոցով պիտի դանա նրանց սեփականություններ, այդ վարժությունները պիտի կատարեն յերևանները հոգևածից, գրքից, (որինակ՝ արտագրած համաձայն նշել բարդ բառեր, նշել ձայնավորություններ, լեզվավոր բառեր և այլն),

հնչափոխություն—վարդ, բարձ, մարդ, վոր, արջ (գրություն և արտասանություն տարբերություն), աղջիկ (ախշիկ), թուղթ (թուխա), յիզրայր (յիսպայր), նույնանիշ բառեր՝ մաղ—հեր, հուր—կրակ, թուշ—այտ:

«Նշաններ» Բ. տարի

1. «Անցնող ամառը»
2. «Ամառը քաղաքում»
3. «Յերկու որ դուրսում»
4. «Փոքրիկ ձկնորսներ»
5. «Ամառը Ծաղկածորում»
6. «Դպրոցում»
7. «Դասարանում»
8. «Նորեկը»
9. «Մեր կենդանի անկյունը»
10. «Ընդհանուր ժողով»
11. «Մեր խմբի գրադարանը»
12. «Աշուն»
13. «Իմ ալիքին»
14. «Կունկը»
15. «Վաղգենի կրկնակողմները»
16. «Մեր դրամաներն աշխարհում»

այդ բոլորը պիտի անել սխառմատիկ կերպով: Երազրած գրականները պիտի կոնսոլիդացնեն թե թե զրափորի միջոցով:

Առաջին առաջնորդի «Նշաններ» դասագրքով քաղաքում և «Նոր դուր» դասագրքով դուրսում, դասագրքից դուրս հաջող հոգևածներ գտնելու դեպքում, կարելի չե ողորկործել: Ծանոթացել ենք մի դասագրքի վրա այն պատճառով, վոր ի նկատի չենք առել յերևանների գրքի աշխատանքը: գրքի աշխատանք լեզվի, ընթերցման շուրջը:

Բոլոր հոգևածների վերաբերմամբ միևնույն մոտեցումը չպիտի ունենալ. կան հոգևածներ, վորոնք պիտի տրվեն, վորպես ընդհանուր գերակներ և սեղան

Գլխավորներ յեւ ռմակաւորներ	Ա. ռ. ր. կ. ա. յ. ի. ց. յ. լ. ւ. ր. ք.	Մշակման ձեւերը, միջոցաւորներ
	17. «Աշնանը» 18. «Այգում» 19. «Արարատ գործարանում»	Նրին վերաբերող լրացուցիչ նյութեր տվող հոդվածներ, կան հոդվածներ, վորոնց պիտի մոտենալ բոլոր կառուցվածքի և ինտոնացիայի տեսակետից:
	20. «Ինչպես ոգնեցինք անապատում յերևութաներին» 21. «Քաղաքն աշնանը» 22. «Գյուղից քաղաք» 23. «Տոնավաճառը» 24. «Վառելիք» 25. «Քաղաքի ցուցանակները» 26. «Քաղաքը գիշերով» 27. «Հոկտեմբերիկ» 28. «Հոկտեմբերին» 29. «Գարմիր հոկտեմբեր» 30. «Նոր ճանապարհով» 31. «Գաղտնի տպարանը» 32. «Թե վանյան ինչպես աղատեց քաղխորհուրդը» 33. «Հրաշալի տնակ» 34. «Բժշկի մոտ» 35. «Կեցե մաքրությունը» 36. «Ինչից առաջացավ մալարիան»	Գյուղական դպրոցները կարող են ոգտվել և «Շչակներ»-ից:

37. «Բնությունը ձմեռը և մեր դրամունքները»
38. «Առաջին ձյունը»
39. «Գետը սառել է»
40. «Փոքրիկ գյուղացին»
41. «Ինչպես աղատվեցի բուքից»
42. «Կարմիրն ու դալը»
43. «Մեր աշխատանքները»
44. «Կորել է մի կատու»
45. «Ով ինչպես է ուտում»
46. «Վորսորդի պատմածից»
47. «Տաք յերկրներում»
48. «Աղանքում»
49. «Բանվոր ժողովուրդ»
50. «Բնակարան և վառելիք»
51. «Փոքրիկ ներկարարները»
52. «Ինչպես են տաքացնում բնակարանը»
53. «Մանուշյուր Լեվիկը»
54. «Նսկիմուս Իվկան»
55. «Իվիլը — բանվորների մշտական պատգամավորն է»
56. «Չորս սերունդ»
57. «Տոկար վոսկանը»
58. «Հացի համար»
59. «Կյանքն ու աշխատանքը քաղաքում»

Գլխիկներ յիմ ունակություններ	Ա, Ա ա ր կ ա յ ի ն յ ու թ ր	Մօական ձեղերը մերթուպան ցուցումներ
	60. «Գործարանը» 61. «Գիքողը խանութպանի մոտ» 62. «Պիտներ թանդոն» 63. «Գործարանի առավոտը» 64. «Քաղաքի փողոցում» 65. «Սոցիալիստական մրցումը» 66. «Գարնան մերձենալը» 67. «Գարուն» 68. «Անզգուշություն» 69. «Մատառունկի որը» 70. «Կյանքն ու աշխատանքը գարնանը» 71. «Խնչձև հաց չկար» 72. «Տրակտոր» 73. «Մարզն լինչով է ճամբորդում» 74. «Առաջին անգամ» 75. «Սարյակը» 76. «Ո՞վ կհավատա» 77. «Պաշտպանեցեք մեր բարեկամներին» 78. «Հանդարտ, ընկերներ» 79. «Մենք կարմիր բանակային ենք» 80. «Մարտի 8-ը թրքական ակումբում» 81. «Բարեկազի վրա» 82. «Լուսիկը ՄՈՊՐ-ի անդամ» 83. «Մանկակոչ» 84. «Մայիսի մեկը» 85. «Ամառ» 86. «Փոթորիկ»	

Պշտիկի համար

1. „Մեր սոցմրցման պայմանագրի պատ-
ճենը“
2. „Լատ-Հո“
3. „Վոզլ աշխարհի պիտեներները“
4. „Կալը“
5. „Աշուն“
6. „Սեպտեմբեր“
7. „Միշտ պատրաստ ենք“
8. „Մեր մասնակցութիւնն ալգեկուլիւն“
9. „Ծիտն ու ծիծեռնակը“
10. „Զրապցականի ննջարանը“
11. „Բերքի տոնը“
12. „Ուշ աշնանը“
13. „Պատրաստվում են ձմեռն համար“
14. „Մեր գլուղի կոպեղատիվը“
15. „Ռադիո“
16. „Հոկտեմբերյան հեղափոխութեան տա-
բեղարձը“
17. „Ծարի տապալումը“
18. „Սարգսի հորթը“
19. „Պիտենը թանդոն“
20. „Աբաթ“
21. „Մեր գլուղն ինչպե՞ս խորհրդ. դարձավ“

Գլխավորներ յեղ ունակություններ	Ա. ո. ա. ր. կ. ա. յ. ի. ն. յ. ո. ւ. ր. ւ.	Մշակման գեղերը, մեքայական ցուցմունքներ
	22. "Չմեռ"	
	23. "Հիվանդանոց"	
	24. "Պետերիկի դեղատոմսը"	
	25. "Զյունը"	
	26. "Մեր խմբի կողանակույթյունը"	
	27. "Անհրեւը"	
	28. "Գրեաց Մալթաղը"	
	29. "Հացի համար"	
	30. "Լենին"	
	31. "Վարդյան դպրոցում"	
	32. "Փոքրիկ մեխանիկը"	
	33. "Գործարան"	
	34. "Հանքում"	
	35. "Շոֆեր"	
	36. "Սալանակը"	
	37. "Խնդուտարացման փոխառությունը"	
	38. "Բանակը կարմիր"	
	39. "Յերածիշտ Ալիոն"	
	40. "Շուտով կգա"	
	41. "Զերմոց"	
	42. "Մարտը"	
	43. "Սարյակի տունը"	
	44. "Բանվորական բրդեղան"	
	45. "Զննարկի"	
	46. "Տատիկն ու թոռնիկը"	
	47. "Առաջին անգամ"	

48. "Գնացք փրկող աղջիկը"
49. "Անգործ գյուղատնտեսը"
50. "Անբավական խոզը"
51. "Ճերմակը"
52. "Արմիկի թուխը"
53. «Մեր հավերը»
54. "Մեղուններ"
55. "Գողը"
56. "Գարուն"
57. "Գարնանացան"
58. "Մենք եւ աշխատեցինք"
59. "Այ՛, ինչ լավ բան է"
60. "Ծառատունկ"
61. "Ի՞նչ ենք ստանում..."
62. "Ինչպես մանակեցեցինք դարձանա-
ցանին"
63. "Ծիածան"
64. "Ցանողները"
65. "Զկնորս Խաչոն"
66. "Վնասարարը"
67. "Մայիս"
68. "Մայիսի 1-ը"
69. "Լուլուն"
70. "Մեր նամակը"
71. "Մեր ողնությունը"
72. "Վերջին ժողովը"

Գրեկիկներ լեզվ ունակություններ

Բանավոր լեզվ գրավոր խոսքի
գաղափարներ

1. Ուսուցչի, աշակերտների պատ-
մածը, ինչպես և ուղղորդող
լրածը յուրաքանչեւ և կարողա-
նալ պատմել:
2. Պատմել կամ համառոտ գե-
կուցում տալ կատարած փոր-
ձերի կամ տարած աշխատանք-
ների մասին: (Հարցերի ձևով
դրված պլանի համաձայն):
3. Բերանացի փոքրիկ պատմը-
վածքներ կազմել ա) իրենց
(յերեսաների) կյանքից, բ)
դպրոցին մոտ արտադրութեան
կյանքից:
4. Հորինել փոքրիկ պատմվածք
համաձայն նկարի, կամ ընդ-
հանուր բովանդակութեան ու-
նեցող մի քանի նկարների:
5. Նախորդ կազմած պլանով
նկարազրել արտադրութեան
պրոցեսը (արտ հնձել, կար-
տոֆել հավաքելը, տրակտորի

Զբոսայց ամառը կատարած աշխատանք-
ների և անցկացրած ուղիների մասին:
Աշակերտները պատմում են. — «Պիտե-
րական կյանքը ճամբարում», «Կոլխոզի ա-
մառային աշխատանքները», «Ճանապար-
հորդութուն» և այլն: Քաղաքից, դրծա-
րանից (յեթե յեղել են կամ աշխատել):
Բառարանի աշխատանք:—Նոր բառերը գրել
բառարանում: Դարձվածքները գրել գրա-
տախոսակն և տեղադրել:

Քաղաք (պիտեղական) փոխ.
Աթ. Խնկոյանի

- աշխատանքը, կալը, դրծա-
րանի փոքեցեկի աշխատան-
քը և այլն) կամ բնության
յերևույթները:
6. Հարցերով պատմել դպրոցա-
կան կինո - նկարի առանձին
տեսարանների բովանդակու-
թյունը:
7. Կոլեկտիվ կերպով կամ ան-
հատորեն կազմել կարճ, ամ-
փոփ հոգվածներ պատի թեր-
թի համար:
8. Դպրոցին մոտ արտադրութեան
կամ իրենց կյանքից վերցրած
դանադան դեպքերի արտասա-
նութուն (դրամատիզացիա):
9. Կազմել դրծնական գրու-
թյուններ — ստացական, դի-
մում, նամակ և այլն:

Ուրեգանություն

1. Բարձրաձայն ընթերցանու-
թյուն տպագրածի և ձեռագրի
— կանոնավոր, առողջու-
թյամբ և դադարով, համաձայն

Պիտանիքներ յիվ ունակութիւններ	Ա Ռ Ա Ր Կ Ա Յ Ի Ն Յ Ո Ւ Ր Ը	Մտական ձեզերք մարդական ցուցմաններ
կետադրութեան և իմաստի շեշտերի: Գործնական գրութիւններ և գեղարվեստական գրվածքներ լավ ընթերցում և ազգայնագրածի քննադատութիւն: 2. Գործնական հոգիւններ և գիտական - հանրամատչելի գրքուկներ ընթերցում: ա) աշակերտները պիտի կարողանան ցույց տալ կարգացած հոգիւնութեամբ կամ գրքուկում իրենց համար անհասկանալի բաները, դարձվածքները, արտահայտութիւնները և այլն, բ) կարողացած հոգիւնութեամբ գրքուկում հետադարձ տալ իրենց հարցերի պատասխանները, գ) ուսուցչի հետ միասին մշակած հոգիւնութեամբ գրքուկում գրել համաձայն պլանի կարճ նախադասութիւններով. դ) հոգիւնութեամբ կարողութեամբ աշխարհա-նալ ոգտագործել գրական քաղաքագր. յի) կարող		

զանալ գրքի մէջ գտնել որինակներ, վորոնք հաստատում են գլխաւոր միտքը:

3. Լրագրի ծանոթութիւն. — Ի՞նչ բաժիններէք և բաղկացած լրագրէք. Ի՞նչպիսի գտնել լրագրում անհրաժեշտ նյութը. Ի՞նչպիսի աշխատագործել գրատեսակի, արտի, կամ պաշտոնի համար:

Լրագրի կոնկրետ ընթերցում:

Փերականութիւն

Յուրացնել և գործադրել քերականական և ուղղագրական սովորած կանոնները:

Ինքնուրույն բառարան կազմել և կարողանալ ոգտագործել բառարանը:

Իմանալ հայերէն այբուբենը կարդալ և տառերի թվական նշանակութիւնը մինչև տասը:

Արտական, հայկական և հոմեական թվանշանների

Փերականութիւն	Փերականութիւն անցնելիս, թե ընթերցանութեան և գրութեան աշխատանքներ ժամանակ կիրառել ակտիւ-հետադարձ յեղանակը:
Սոսք (նախադասութիւն): Յենթակա և ստորոգյալ. — նրանց նշանակութիւնը խոսքի մեջ: Յենթակալի և ստորոգյալի համաձայնութիւնը թվով և դեմքով: Սոսքի կանոնները կազմութիւնը (լրիկ, պարզ և բարդ: հաջորդական դասավորութիւն): Հարցական խոսքի կազմութիւնը: Իմաստի (տրամադրական) շեշտը խոսքի մեջ: Իմաստի շեշտը հարցական խոսքի և պատասխանի մեջ: Հարցական նշանի գործածութիւնը: Հարցական խոսքի ինտոնացիան:	Փերականութեան և ուղղագրութեան վրա հասուն ուշադրութիւնը դարձնել — քերականական կանոնները իրենք՝ աշակերտները պիտի մշակեն իրենց յեղանակներով:

Այսպիսի կատարյալի յեզակի յերրորդ դասի ուղղագրությունը (այ, եց)։ Այսպիսի անկատարի ուղղագրությունը, ապառնիկ ուղղագրությունը։

Միջադասյին բառեր, — հաճախ հանդիպող միջադասյին դժվար բառերի ուղղագրությունը։

Բառարանի փոփոխությունը հոկտեմբերյան հեղափոխությունից հետո։ ա) նոր բառեր—կոխողներ, հարվածային, սոցիալ-ցույցային և այլն։ բ) բառեր, վորոնք նոր խմատ են ստացել—բրիգադ, բլիշ, մրցակցություն։ գ) բառեր, վորոնց սոցիալական արժեքը փոխվել է (անաստված, պարոն և այլն)։

Հոդվածներ իսկ վոսամուկներ

(Տեղը հիշատակված հոդվածներն ու փոսամուկները վերցրված են «Պատանի կոսմոսական Գ. տարի» գրապատկերից—1931 թ.)

1. Յերեկ ու այսոր—Վ. Անանյան
2. Յերկաթե ձին—Կուզինով
3. Աշուն
4. Ինչպես թռա—Սերիկ

5. Ովկիանոսների ու լեռնաշղթաների վերաբերյալ
6. Մեր բրիգադի աշխատանքներն այսուհի
7. Աշխատանքի յերգը, վոտ.

1. Ինտերնացիոնալ. թ. Յե. Չարենց (Լուս.)
2. Իվանեն
3. Այսպես ելին մեռնում հերոսները—Գ. Յրիդ
4. Լենինը հոկտեմբերի նախադասյին
5. Ստալին
6. Պատանի բալլետիկ—Վ. Անանյան
7. Մեծ հնգամյակը—Կրժիժանովսկի և Իվուզ

1. Մեր գյուղատնտեսական 5-ամյա պլանը
2. Ռադիո
3. Վարակիչ հիվանդություններ
4. Նոր գյուղը—Վոտ.
5. Ընկեր խողարածը
6. թշնամու արած ա—Ա. Թամազյան
7. Գուլիանի յերգը—Հ. Թումանյան

Լենինյան ուրեք

1. Բանտում
2. Վ. Ի. Լենին
3. Մահափորձ Լենինի դեմ
4. Հացի համար

Գլխիկներ յեզ նմանություններ	Առաջիկայի նյութը	Մասկան ձևերը, փոփոխական ցուցանիշներ
	1. Չեթ-ոճարի գործարանում՝ 2. Արտադրական խորհրդակցութիւնն 3. Բազուն անցյալում և ներկայում՝	
	վարատանի խորհրդայնացւան տարեգարծին	
	1. Խորհրդային վարաստանին— Շ. Նավթուղի «Լուսարաց» ժող. № 6	
	Գարնանացանի կամպանիա	
	1. Կոլխոզային դարուն, վոտ. 2. Կոլխոզի առավոտը 3. Մեքենայի բժշկները 4. Մեր աչքը խորհրդային տնտեսութեան 5. Այրվող բուռը 6. Անբախտ ճնճողուկներ 7. Գելը—չ. թումանյան 8. Փոքրիկ հովիվը 9. Ողաչու վանյան, վոտ.	

1. Նոր բանվորունի 2. Անիծած հարսը—չ. թումանյան 3. Հարվածայիններ 4. Փարիզի կոմունայի հերոսները 5. Լուսիկը ՄՈՊՏ-ի անդամ 6. Ինչպիս տոնեցին մայիսի 1-ը 7. Նամակ Ամերիկայից ընկ. Ստալինին	
--	--

Պիւսեօքիներ յեվ ունակութայուններ		Մ'աւական մեկերը մերթապան ցուցմունքներ
1. Բամալոր լել գրավոր խոսք — Հաղորդում, զեկուցում, ուղղիտ լսելու վարժութիւն, միաժամանակ նաև գրի առնել այն, ինչ անհասկանալի չէ և ինչին համամիտ չես (հետագայում արտահայտվելու համար)։ 2. Դատաւիզ զեկավարութիւնով պատրաստել զեկուցում — հաղորդում կատարված փորձի, աշխատանքի, երկու-ընթացի և կարգացած գրքի մասին վերջ ծրագրով ա) զեկուցման նպատակը, բ) նյութը, գ) գրավոր պլան (զլիւսվոր մտքերի) և քննութիւնը։ 3. Նախապատրաստութիւն աշակերտական աշխատանքների ցուցանանքների մասին բացատրութիւն տալու։ 4. Տալ կարողացած հոգեւոր վիճակի մտքերը ըստ պլանի և առանց պլանի։ 5. Հաղորդել իր տպավորութիւնները և մտքերը կարողացած պատմվածքի վերաբերմամբ։	I 1. Անտալիս սպախութիւններ։ — Նոր բաներ և դարձվածքներ։ Դրախոր աշխատանքներ ամառային աշխատանքների շուրջը («Աշխատանքը կողմնակուսութիւնում»), «Բերքի հավաքը» և այլն)։ 2. III-րդ խմբակում անցած զիտելիքներին ամփոփում։ Ըրացում և խորացում։	Ա. ո. ա. ր. կ. ա. յ. ի. ն. յ. ո. ւ. ր. ք.

6. Կապի լուծարման արդյունքում հանձնարարվում է փոխարինել համապատասխան համակարգերը՝ ընդհանուր համակարգի հետ համապատասխանություն ապահովելու նպատակով:

2. Բեմադրութիւնն և խնայե-
նելովկայի փորձելու:

8. Կաղցրել զիմում, հալտա-
րալուծիուն, հեռագիր, պարզ
արձանագրութիւն (զրի առնել-
լով, թե ով ինչ է խոսել):

9. Նամակ - դիտողունք յուն-
թղթակցունք լրագրին, ժուր-
նալ-դասագրքին. կաղմել հաշիւ-
տուլութիւն խմբի, բրդեագիւ, ուս-
կի աշխատանքի մասին պատի
քերէի համար:

Յուզ տալ լեզվի փոփոխու-
թյունը. փորոշ բառերի ձևերի
փերացումը (փոստիկան, տաճար,
ի բայ առյալ և ալին) և նոր բա-
ւեր՝ խորհուրդներ, կողմնակա-
թյուններ և ալին): Նորամուտ
առեր ալ լեզուներէն. կնտեր-

Պատկանման ձեռքերի մեքենայական ցուցանիշներ	Ա Ռ Ա Ր Կ Վ Յ Ի Ը Յ Ո Վ Ը Ը	Պիտեիներ յեղ ունակություններ
		նախնական բառեր (կոմունիզմ, սոցիալիզմ, կապիտալ և այլն)։ II. Ընթերցանություն։ 1. Բարձր, արտահայտիչ ընթերցանություն համաձայն կետադրության և կարդացածի խմատի։ Կարգալիս ընթերցանությունը մոտեցնել խոսակցական լեզվին։ Լուս ընթերցանություն գործնական հոգվածներին, գեղարվեստական յերկերին, փոքրիկ ֆաղափական և գիտական - մատչելի բրոշյուրներին։ 2. Գործնական և մատչելի գրքույկներ ընթերցանություն, ա) ֆաղվածքներ անձանոթ բաների, դարձվածքների համապատասխան բացատրությունը գրի առնելով։ բ) Կարդացածի առթիվ իր հարցերն առաջադրել։ դ) Կարդացած հոգվածի գրվածքներ մտքերն աշխատել և գրի առնել առանձին նախադասություններ։

դ) Բառարանները, տեղեկատու գրքերը և այլն ոգտվելու հմտություն։

III. Լեզվական գիտելիքների յեղ ունակությունների գործնական կիրառում։

1. Հեռախոսով հաղորդում անել և ընդունել։

2. Ժողով կառավարել (որակարգի մշակում)։ Ոնգվածներ, գործնական առաջարկներ ձևակերպում, յեղյութներ ամփոփում։

3. Մասնակցել արտադրության հետ պայմանագիր կնքող աշխատանքին։

4. Գրադրություն ունենալ իՍՆՄ-ի այլ ուսյունների գրությունների և արտասահմանյան մանկական կազմակերպությունների հետ։

5. Համատու հանձնարարականներ կարդացած գրքի մասին։

6. Ոգնել գրադարձառաջարկները պայուցակ կազմելու գործում։

II

Փեռակնություն յեղ ուղղադրություն

(Նախադասություն) խոսքի տեսակները, պատմական, հարցական, հրամայական և բացականչական։ Դրանց կառուցվածքը, առողանությունը և կետադրությունը։

Կոչական ձայնարկություններ, անուն, միջանկյալ բառեր, նրանց նշանակությունն ու տեղը նախադասության մեջ, դրանց կետադրությունը։

Ուղղակի, անուղղակի խոսք։ Ուղղակի խոսքն անուղղակի դարձնել և ընդհակառակը, չակերտի, գծի և ստորակետի գործածությունն այդ դեպքերում։

Բառ - խոսքի (նախադասություն) անցումը բազմանդամ (նախադասություն) խոսքի և խոսքի մասերի (կաթեգորիաների) անջատումը, գոյական, ածական, դերանուն, թվական, բայ, մակբայ։ Բայի ժամանակները։ Դերբայ, նրա ուղղադրությունը (լրսած, կարգացած)։

1. Միատեմատիկ գիտելիքներ, ունակություններին այն գումարը, փոր այտեղ գրվում, կազմում և լեզվական աշխատանքների հիմքը, ա) գրքի, լրագրի աշխատանքը, բ) ինքնուրույն գրավոր աշխատանքներ (գործնական գրություններ, թղթական գրություն, գեղուցում և այլն)։

գ) բանավոր յեղյութներ, դ) գեղարվեստական յերկի ընթերցում, ընդունում։

2. Բանավոր և գրավոր խոսքի կարգացման համար անհրաժեշտ և, փոր հարկավոր դեպքում յուրացվել կանոնները բանավոր և գրավոր վարժություններով հմտանալու համար։

3. Մակայն այս վարժություններն աշխատ, անկապ բընույթ չեն կրելու, լեղական

Գլխիկներ յով ունակութիւններ	Ա. Ա. Ե. Կ. Վ. Ե. Զ. Ը. Թ.	Մականաման ձեւերը, մեքողական ցուցմաններ
7. Աշխատանք դրքի տարածման ասպարիզում: 8. Դիտողութիւն, թղթակցութիւն շրջանի լրագրին և ժուրնալ - դասագրքին:	Բառարանի աշխատանք, բառի իմաստն ու տեսակները՝ նույնանիշ, համանուն և հականիշ, բառի փոխարեւակաճ նշանակութիւնը (այլաբանութիւն): Մակբաշխիւրի և թղթակցանիւրի ուղղադրութիւն: Ձայնափոխութիւն (սեւր, սիրելի տուն—տներ, գործունայա — գործունայութիւն): Դիմորոշ հոդեր: Գաղափար խոսքի կապակցութիւն մասին, խոսքերի կապակցութիւնը բարդ ասացվածքի մեջ, կապակցել այդ խոսքերը շարկապնելով (և, ու, իսկ, բայց, սակայն, վոչ, յետև և այլն) և հարաբերակաճ դերանուններով (ով, ինչ, ուր, յերբ), կետադրութիւնն այդ դեպքերում:	յերևույթներն ուսումնասիրելու յեն փոխադարձ կապակցութիւնը ստեղծակալի արժեքալորման տեսակետից՝ քերականական յերկվութիւնները բովանդատ յեն հոգվածներին, կենդանի լեզվից և այլն: 4. Լեզվական այս բոլոր աշխատանքները մեջ դերակալող մեթոդը պետք և լինի՝ ակալիկ-հետադրականը:
III Հոլվածներ		
Ա.		
1. Լուսարացին — Հ. Հակոբյանի. «Կ. և աշխ.» 2. Հարվածայինները յերդը. Ա. Գիւղուշից 3. Աշխատանքի յերդը — Հ. Հ.		
«Կարմիր արև» IV տ.		

4. Մետաքսագործարանում—Հ. Հ. «Կյանք և աշխատանք»		
5. Տուփը—Մ. Արմեն «Կարգա և արտասանիւր», յեր. 123		
6. Ձորագետին—Վ. Նորենց » » 128		
7. Մուրճի յերդը — «Կյանք և աշխ.» 153		
—		
1. Բամբակ—Սերիկ.	» » 20	
2. Թէյի մասին » » 25		
3. Հնգամյակի հետախույզները — Իլին «Կյանք և աշխ.»	» » —	
4. Նալթի լճակներ » » 178		
5. Տոննիկի ճամբին » » 188		
6. Ձանդի—Վ. Թոթովենց » » —		
7. Կրակի հետքերով » » —		
Բ		
1. Սարգսի պարտքը—Լեւո, «Կար. Արև IV տ.		
2. Գիւղը—Հ. Թում, «Կյանք և աշխ.» IV տ.		
3. Փյունը-Չամի պատմութիւնը—Լազո «Կարմիր Արև» IV տ.		
4. Աղա Բարաթովի դատը » » V տ. I հր.		
5. Կոմունարները—Դ. Բեդի, վոտ. «Կյանք և աշխ.»		
6. Կոլտնտեսութիւնը—Ս. Նալթ.		

Գիտելիքներ յիշ ունակութիւններ	Առարկայի նշանակութիւնը	Մշակման ձեւերը, մեթոդական ցուցմունքներ
-------------------------------	------------------------	--

7. Հնձվորը, վոտ, ն. Չարյան «Կ. և Աշխ.»
8. Չե, լավ պրծանք, — Սիմակ »
9. «Կարմ. բանակային» կոմունան »
10. Անտոնային, վոտ. — ն. Չարյան
11. Ցաթալին — «Կյանք և արտաս.» — 117

Գ

1. Նեղազար յերկիրը — Իլին — «Կ. և աշխ.»
2. Մխոնդ — Ե. Չոլա »
3. Քաղաքը, վոտ. հ. հ. «Կար. Արև» IV տ.
4. Դասակարգը դասակարգի դեմ —
5. Նոտա Չինաստանին — «Կարմիր Արև» IV տ.
6. Կոմունարները — «Կյանք և աշխատանք» »
7. Ստուգենք պրոստերը — » յեր. 6

Գ

1. Գաղանի ժողով, Լ. Քիաչելի «Կ. և աշխ.»
2. Հոկտեմբերը — Յակովկա »

3. Խնտերնացիոնալ թ. Յե. Չարենց «Կ. և Ա.»
4. «Հայաս. խորհրդայնացումից »
6. Իլիչի մոտ, Բեգիմենակի «Կ. Արև» IV տ.
6. Ուղիղ ժ. 4-ին «Կ. և աշխ.» IV տ.
7. Լենին, հ. հ. — «Կարմիր Արև» IV տ.
8. Մայրը — Գ. Գրիգ «Կյանք և աշխատ.»
9. 25 փետրվարի, «Գրական դիրքեր» 30 թ.
10. Մաճկալ Սաքոյի պատմութիւնը — Չարենց, «Կարմիր Արև» IV տ.

1. Մարտի ութը, «Կյանք և աշխ.»
2. Քրոջա լաչակը — Վ. Նորենց, «Կարգա և արտասանիք»
3. Մետերիքանտը, Ա. Գեւ, «Կ. Արև» IV տ.
4. Մեռան, չկորան, հ. հ. »
5. Կարմիր բարեկազմ, Արագի »

1. Ընկերները, Յե. Չարենց «Կ. Արև» IV տ.
2. Մայիսի մուտքը, «Կյանք և աշխատ.»
3. Պատանի ոսգիներ, Վ. Միր. »



ՀՀ Ազգային գրադարան



NL0243445

32A

10.157

